ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

ԱՂՈՒԱՆՔ ԿԱՄ ՉԻՐՈՒԱՆ

Ցանկանալով մի համառօտ տեղեկութիւն տալ հին Աղուանից աշխարհի վերայ՝ նկարագրեմ նորա մէջ եղած միայն քաղաքները՝ Բաղու, Շամախի, Ղուբայ և Դարբանդ, որով կարդացողը կարող է երկրի օդին ու ջրին, մարդին, ու գործին ծանօթանալ, և նրանցով իմանալ նա և գաւառների և գիւղօրէից դրութիւնը ամենայն մասամբ։

Չիրուան նոյն է Աղուանից աշխարհը, որին Պարսիկներն այսպէս են անուանել, որ կարծես նոյն միտքն է յայտնում, այն է Չիրաւան (Առիւծուց բնակարան, որ է ասել քաջաց տեղիք), թէ և ոմանք Չիրը քաղցր թարգմանեն և համեմատեն աղու բառի հետ, որ ըստ դրոց քաղցր՝ անոյշ՝ աղուոր , գեղեցիկ նշանակէ, ով ինչպէս կուզէ, թող մեկնէ, ստուգաբանէ և բացատրէ. պատմութիւնը (Մովսէս Խորենացի և բոլոր պատմիչք) այս աշխարհքին առաջին տէր ներկայացնում է Գեղամ նահապետի որդի Սիսակին, որ քաղցր և անոյշ բարուց համար Աղուան կոչեցաւ, այն է աղով համեմած, որ է ասել քաղցրաբարոյ՝ որից յառաջացաւ Սիսակեան նախարարութիւնը՝ այն է Սիւնեաց, և Աղուանեանցը, որ է Չիրուանին. ըստ որում Սիսակի որդիքն ու թոռունքն շատանալով և զօրանալով՝ եկան, հասան և իշխեցին մինչեւ Կասպից ծովի եզերքը, որոնցից՝ նշանաւոր էր Վաղարշակ թագաւորի ժամանակ Առան նահապետը։